



EU4Energy



INTERNATIONAL  
**ENERGY CHARTER**  
for EU4Energy

# ԷՆԵՐԳԵՏԻԿ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՋԱՏՈՒՄ




# ՀԱՅԱՍՏԱՆ



Funded under the EU4Energy Initiative of the European Union

*Energy Charter Secretariat  
November 2017*

«Իյուֆորէնըրջի ինիշյըթիվ»-ը (EU4Energy Initiative) Էներգետիկ ոլորտում միջազգային համագործակցության ծրագիր է, որի շրջանակում Եվրոպական միությունը (ԵՄ) համագործակցում է Արևելյան գործընկերության (ԱԳ) վեց երկրների (Յայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի) և Կենտրոնական Ասիայի հինգ երկրների (Ղազախստանի, Ղրղզստանի, Թաջիկստանի, Թուրքմենստանի և Ուզբեկստանի) հետ՝ նպատակ ունենալով բարելավել Էներգամատակարարումը, Էներգաանվտանգությունը և ծառայությունները, ինչպես նաև խթանել Էներգաարդյունավետությունը և տարածաշրջանում վերականգնվող Էներգետիկ աղբյուրների օգտագործումը: ԵՄ-ն ֆինանսավորում է այնպիսի ծրագրեր, որ խթանում են Էներգիայի շուկայի բարեփոխումները և կենսունակ նախաձեռնությունները՝ նպատակ ունենալով աջակցել գործընկեր երկրներին թուլացնել Էներգետիկ կախվածությունը, ամրապնդել տոկոսությունը և, միաժամանակ, նվազեցնել արտանետվող ածխածնի մասնաբաժինը: Այս միջոցառումները նաև կօգնեն տնային տնտեսություններին և բիզնեսներին Էներգասպառման արդյունավետության բարելավման գործում:



ENERGY CHARTER SECRETARIAT  
2017



## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԱՆ ԶԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս հաշվետվությունը մշակվել է ԵՄ աջակցությամբ՝ «Իյուֆորէնըրջի ինիշյըթիվ» ծրագրի շրջանակում: Զաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության համար պատասխանատու է միայն Էներգետիկ խարտիայի քարտուղարությունը: Զաշվետվությունը որևէ դեպքում չի արտացոլում Եվրոպական միության դիրքորոշումը: Ներկայացվող տեղեկատվությունը ստացվել է, մեր կարծիքով, վստահելի աղբյուրներից: Այնուամենայնիվ, Էներգետիկ խարտիայի քարտուղարությունը չի երաշխավորում հրապարակվող տեղեկատվության ճշգրիտ կամ լիարժեք լինելը և, հետևաբար, ազատվում է որևէ պատասխանատվությունից, որ կարող է բխել այդ տեղեկատվության օգտագործման կամ դրանում առկա սխալների կամ բացթողումների հետևանքով առաջացած վնասներից կամ կորուստներից: Զաշվետվությունը հրապարակվում է Էներգետիկ խարտիայի քարտուղարության կողմից միայն տեղեկատվության տրամադրման, այլ ոչ իրավաբանական կամ մասնագիտական այլ ծառայությունների տրամադրման ձևաչափով: Զասցե՝

Energy Charter Secretariat  
Boulevard de la Woluwe, 46  
B-1200 Brussels, Belgium

Տեղեկատվության աղբյուրներին հղում տալու և կիրարկելի իրավական արգելքների բացակայության դեպքում՝ այս աշխատանքի վերարտադրությունը թույլատրվում է: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Գլխավոր քարտուղարի ուղերձը

«Իյուֆորէնըրջի ինիշյըթիվ» ծրագրի ներքո և հիմք ընդունելով Էներգետիկ ներդրումների շիկերի գնահատման (ԷՆԳ) հաշվետվությունը՝ Էներգետիկ խարտիայի քարտուղարությունը մշակել է Զայաստանի շիկերի ընդլայնված գնահատում: Սույնով ներկայացնում ենք շիկերի վերլուծության և մեղմիչ գործողությունների իրականացման արդյունավետ գործիք, որը հանդիսանալու է Զայաստանում ներդրումային պլանավորման հիմնական մեխանիզմը: Ռիսկերի գնահատումը ընդգրկելու է երկրի ամբողջ Էներգետիկ ոլորտը: Ցանկանում եմ և հույս հայտնում, որ Զայաստանի շիկերի ընդլայնված գնահատումը կօգտագործվի որպես փոխվստահության ամրապնդման գործիք, որը կօգնի Զայաստանի Զանրապետության կառավարությանը և ներդրողներին հասնել փոխըմբռնման՝ Զայաստանի ներդրումային քաղաքականության հետագա բարելավման գործում և կօժանդակի Էներգամատակարարմանը, Էներգետիկ ցանցերի հասանելիությանը և Էներգաաղբյուրների տարազանմանն ուղղված համատեղ ջանքերի իրականացմանը:

Էներգետիկ խարտիայի քարտուղարություն  
Գլխավոր քարտուղար՝  
Դկտ. Ուրբան Ռուսակ  
Բրյուսել, նոյեմբեր 2017թ.

# ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս գնահատման հիմնական նպատակները երկուսն են. առաջինը՝ աջակցություն տրամադրել Հայաստանին Էներգետիկայի ոլորտն օտարերկրյա ներդրողների համար ավելի գրավիչ դարձնելու գործում և, երկրորդը՝ Էներգետիկայի ոլորտի ընկերություններին և, մասնավորապես, օտարերկրյա ներդրողներին ընդհանուր տեղեկատվության տրամադրում, Հայաստանի կարգավորման դաշտի դրական և ոչ շատ դրական կողմերի մասին: Ծեշտը դնելով Հայաստանի Էներգետիկայի ոլորտում գործող քաղաքականության, իրավական և կարգավորման միսկերի վրա՝ այս փաստաթուղթն ընդգծում է հիմնական ուժեղ կողմերը և այն բարեփոխումները, որ իրականացրել է ՀՀ կառավարությունն այս ոլորտում:

Մասնավորապես, Հայաստանի Էներգետիկայի ոլորտի միսկերի այս ընդհանուր բնութագրումը հիմնված է այն մեթոդաբանության վրա, որը մշակվել է Էներգետիկ խարտիայի քարտուղարության Հայաստանի Էներգետիկ ոլորտում ներդրումային միսկերի գնահատման (ԷՆԲԳ) հաշվետվության համար և հատկորոշում է միսկային իրավիճակների առաջացման հետևյալ երեք հնարավորությունները. քաղաքականության/կարգավորման դաշտի անկանխատեսելի փոփոխությունը, խտրականությունը տեղացի և օտարերկրյա ներդրողների միջև և պետության կողմից ստանձնած պարտավորությունների չկատարումը:

Այս ոլորտներում միսկայնության մակարդակը որոշվում է չորս հիմնական ցուցանիշներով, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է 2-3 ենթացուցանիշ, յուրաքանչյուր միսկի համար: Այդ ցուցանիշներով չափվում է Հայաստանի քաղաքականության, իրավական ու կարգավորման դաշտերի միսկերը մեղմելու և կառավարելու կարողությունը, որն ամրապնդվում է համեմատաբար կայուն և առողջ քաղաքականության նպատակների, դրանց սահմանման գործընթացների և օրենսդրության թափանցիկության, տեղացի և օտարերկրյա ներդրողների համար հավասար պայմանների ստեղծման, ազգային օրենսդրությամբ սահմանված և միջազգային համաձայնագրերով (պայմանագրերով) ամրագրված պարտավորությունների կատարմամբ և օտարերկրյա ներդրողների հետ առաջացած վեճերի արդյունավետ կարգավորմամբ:

Թիրախային երկրների ընդհանուր կատարողականի մակարդակը ներկայացված է (1) միավորների սանդղակով, որն արտացոլում է կատարողականն ըստ հիմնական ցուցանիշների

և ենթացուցանիշների և (2) երկրների միսկերի գնահատումը, որը ցույց է տալիս միսկի մակարդակը յուրաքանչյուր երկրում և այն ուղղությունները, որ պահանջում են բովանդակային և տեսանելի բարեփոխումներ:

ԷՆԲԳ հաշվետվության գնահատման սուբյեկտ է հանդիսանում երկիրը: Այս վերլուծության նպատակով տվյալներ են ստացվել կառավարություններից և երրորդ կողմերից: Ըստ սահմանված մոտեցման, օգտագործվել են բազմաթիվ շահագրգիռ կողմերի տրված կարծիքներ՝ միսկերն ավելի լավ պատկերացնելու և դրանց գնահատումը նախաձեռնելու համար: Ավելին, տարբեր կողմերի մասնակցությունը թույլ կտա խուսափել միակողմանի մոտեցումներից և կփարատի երկրներում ձևավորված ինքնագնահատման տրամադրությունը:

Գծապատկերներում արտացոլված են կատարողականի գնահատականները. այսպես օրինակ՝ Նկար Ա-ում տրված է միսկի մակարդակը յուրաքանչյուր միսկային ոլորտում, իսկ Նկար Բ-ում՝ Հայաստանի կատարողականն ըստ ենթացուցանիշների: Նկար Գ-ում ներկայացված է կատարողականն ըստ բոլոր հիմնական ցուցանիշների: Բոլոր նկարներում «0»-ն նվազագույն միավորն է, իսկ «100»-ը՝ առավելագույնը:

Այս գնահատումն ունի հետևյալ կառուցվածքը. սկզբում ամփոփ ներկայացվում է Հայաստանի ներդրումային միջավայրը, գնահատվում են թիրախային երեք ոլորտներում առկա միսկերը և չափվում է Հայաստանի քաղաքականության, իրավական ու կարգավորման դաշտերի միսկերն արդյունավետորեն կառավարելու կարողությունը: Վերջում տրվում են առաջարկություններ, որոնց նպատակն է աջակցել ՀՀ կառավարությանը ներդրումային միջավայրի հետագա բարելավման գործում:

# ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՐԱՏՈՒՄ

## Ընդհանուր կատարողական



Ըներգետիկայի ոլորտում ներդրումները խրախուսելու համար Հայաստանը ստեղծել է ամուր իրավական և կարգավորման դաշտ: Պետական պարտավորությունները չկատարելու ռիսկը ցածր է, ինչպես և ներկայացված է Նկար Ա-ում: Բարձր է նաև


Հայաստանի կատարողականի մակարդակն ըստ հարակից ենթացուցանիշների, մասնավորապես. (1) պայմանագրերի իրականացում, տեղական մակարդակով վեճերի լուծում և ՆՊՎԿ, ինչպես նաև (2) սեփականության իրավունքի պաշտպանություն (Նկար Բ):

Տեղացի ու օտարերկրյա ներդրողների միջև խտրականության ռիսկը նույնպես համեմատաբար ցածր է (Նկար Ա)՝ տվյալ ռիսկային ոլորտի ենթացուցանիշների մասով Հայաստանի բարձր կատարողականի շնորհիվ, մասնավորապես. (1) թափանցիկություն, (2) ինստիտուցիոնալ կառավարում, (3) ՕՈՒՆ սահմանափակումներ և (4) կարգավորման դաշտի արդյունավետություն (Նկար Բ): Մասնավորապես, զովելի է կարգավորող մարմնի արդյունավետ գործունեությունը եւ նրա իրավասության վերաբերյալ շահագրգիռ կողմերի դրական ընկալումը:


Ի վերջո, ամենամեծ ուշադրությանն արժանացած ռիսկը վերաբերում է քաղաքականության/կարգավորման դաշտի անկանխատեսելի փոփոխություններին (ինչպես ցույց է տրված Նկար Ա-ում): Թեև, այս ռիսկը գնահատելու համար օգտագործված ենթացուցանիշներից շատերի մասով Հայաստանը բավականին առաջադիմել էր, օր.՝ (1) Ըներգետիկայի ոլորտի քաղաքականության առաջնահերթությունների ու հատուկ նպատակների առկայություն, (2) ինքնավստահություն նպատակների իրականացման նկատմամբ, (3) ինստիտուցիոնալ կառավարում, (4) նպատակների իրատեսականություն և (5) հարգանք սեփականության իրավունքի նկատմամբ, այնուամենայնիվ որոշ ենթացուցանիշների մակարդակը դեռ համեմատաբար ցածր է, օր.՝ (6) թափանցիկություն և (7) պայմանագրերի իրականացում, տեղական մակարդակով վեճերի կարգավորում և ՆՊՎԿ (Նկար Բ): Պատճառը, հավանաբար, այն է, որ քանի դեռ կառավարությունը պարբերաբար խորհրդակցություններ է անցկացնում շահագրգիռ կողմերի հետ առաջարկվող օրենսդրական ու ենթաօրենսդրական փոփոխությունների վերաբերյալ, օրենքով նման պահանջի բացակայության պայմաններում, շահագրգիռ կողմերը այն դիտարկում են որպես ռիսկ: Հայեցակետերից մեկն էլ այն է, որ կառավարության դեմ միջազգային մակարդակով կայացված դատական վճիռների իրականացումն ավելի թույլ է, քան արբիտրաժային որոշումների իրականացումը:

Նույնիսկ եթե իրավական ու կարգավորման ռիսկերը Հայաստանում ցածր են, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել էլ ավելի ամրապնդելու ներդրողների վստահությունը և բարելավել կատարողականը բոլոր ենթացուցանիշներով (Նկար Բ) և հիմնական ցուցանիշներով (Նկար Գ): Հաջորդ բաժիններում ներկայացվում է հիմնական ուժեղ կողմերի և բարելավման ենթակա ոլորտների մանրամասն վերլուծությունը:


## Նկար Ա Ռիսկի մակարդակի գնահատում



## Նկար Բ Կատարողականն ըստ ենթացուցանիշների



## Նկար Գ Կատարողականն ըստ հիմնական ցուցանիշների



# ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ 1՝

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏԻ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Էներգետիկ ոլորտի զարգացման համար Հայաստանը սահմանել է հատուկ նպատակներ և խնդիրներ: Հայաստանի Էներգետիկ ռազմավարության հիմնական առաջնահերթություններն են Էներգետիկ անվտանգության և արդյունավետության բարձրացումը՝ ը վերականգնվող Էներգետիկայի զարգացման, Էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և Էներգաարդյունավետության բարելավման միջոցով: Կառավարությունն ունի նաև այլ կարևոր խնդիրներ, ինչպիսիք են օր.՝ առավելագույնի հասցնել տեղական Էներգետիկ ռեսուրսների օգտագործումը, ապահովել հնացած տեխնոլոգիաների փոխարինումը, ընդլայնել Էներգետիկայի ոլորտի տարածաշրջանային ինտեգրումը, ատոմային Էներգետիկայի հետագա զարգացումը:

Հայաստանի Էներգետիկայի ոլորտի ընթացիկ նպատակները սահմանող հիմնական փաստաթղթերն են. (1) Հայաստանի Հանրապետության Էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը, (2) Հայաստանի Հանրապետության 2012-2025 թվականների զարգացման ռազմավարությունը (3) Հայաստանի Հանրապետության Էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036թ.) զարգացման ուղիները՝ հաշվի առնելով կառավարության կողմից թիրախավորված վերջնական արդյունքները և (4) Հայաստանի Հանրապետության Էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների և դրանց իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիրը:

Կառավարությունը նաև մշակել և հաստատել է երկարաժամկետ ներդրումների ռազմավարական փաստաթղթերը, որոնք հստակ պատկերացում են տալիս ներդրողներին Էներգետիկայի այն ենթաօլորտների մասին, որոնցում ավելի մեծ ներդրումներ կամ ներդրումների հետագա խթանում է անհրաժեշտ: Այս տեսանկյունից, հիմնական փաստաթուղթը 2014 թվականի ներդրումային պլանն է, քանզի այն գնահատում է պոտենցիալ ծրագրերը, կանխատեսում ծախսերը և առաջարկում փոփոխություններ ներկայիս ներդրումային դաշտում: Նմանապես, Հայաստանի 2014 թվականի վերականգնվող Էներգետիկայի ոլորտում ներդրումների խթանման ծրագիրը պարունակում է վերականգնվող Էներգետիկայի ոլորտի ներուժի համակողմանի վերլուծությունը, հատուկ տեխնոլոգիաների կիրառելիության ծախս-արդյունավետությունն ու իրատեսական լինելը և ֆինանսական պլանը: Էներգետիկ նպատակների արդյունավետ իրականացման հսկողության ու մշտադիտարկման համար Հայաստանում կան բոլոր անհրաժեշտ օրենքները: Ավելին, վստահելիությունն էլ ավելի ամրապնդելու համար, ներդրողներին (այլ կարևոր շահագրգիռ կողմերի հետ միասին) խնդրում են իրենց կարծիքը ներկայացնել առաջարկվող օրենքների/ ենթաօրենսդրական ակտերի/քաղաքականությունների վերաբերյալ, մինչև վերջիններիս իրականացումը: ՀՀ կառավարության և ՀՀ Ազգային ժողովի նիստերի օրակարգերը, կից առաջարկվող նախագծերով հրապարակվում են Էլեկտրոնային կառավարման նախաձեռնությունների միջոցով:

Հայաստանը երաշխավորում է, որ սահմանվող նպատակները կլինեն կայուն և կանխատեսելի: Ընդհանուր առմամբ, շահագրգիռ կողմերը (որ մասնակցել էին ԷՆԲԳ հարցմանը) այն կարծիքի էին, որ Էներգետիկ ոլորտի սահմանված նպատակներն ու խնդիրները իրատեսական են և հասանելի: Սակայն, կառավարությունը մտահոգություն էր արտահայտել այն մասին, որ չնայած ներկայում Հայաստանի Հանրապետությունը մշակում ու լրամշակում է օրենքների մի մասը՝ ներդրողների համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով, ըստ կանխատեսումների հնարավոր է, որ խոչընդոտներ առաջանան նոր քաղաքականությունների ու կանոնակարգերի խթանման և իրականացման ընթացքում: Խոսքը մասնավորապես Էլեկտրաէներգիայի շուկայի մասին է, որն, ըստ ծրագրի, պետք է ազատականացվի 2019 թվականին՝ Եվրասիական տնտեսական միությանը (Էլեկտրաէներգիայի միասնական շուկայում) Հայաստանի մասնակցության և ԵՄ արևելյան գործընկերության շրջանակում նախաձեռնված բարեփոխումների լույսի ներքո: Եվ վերջապես, որոշ կազմակերպություններ նշում էին, որ սահմանված նպատակների իրականացումն ապահովելու համար, կառավարությունը ներդրողներին առաջարկում է գրավիչ և հարատև խթաններ, մինչդեռ այլոք պնդում էին, որ որոշ խթաններ, ինչպես օրինակ՝ որոշ ապրանքատեսակների մասով մաքսային արտոնությունները, շատ ընդհանուր են և չեն թիրախավորում Էներգետիկայի ոլորտը:

Հիմնական ցուցանիշ 1	Միավոր
Էներգետիկ ոլորտի քաղաքականության առաջնահերթությունների և հատուկ նպատակների առկայություն	-
Նպատակների ողջամտություն	80.5
Վստահություն նպատակների իրականացման նկատմամբ	90.2
<b>Ընդհանուր գնահատական՝</b>	<b>85.4</b>

## Հիմնական ուժեղ կողմեր

Էներգետիկայի և ներդրումային ոլորտների հատուկ նպատակներ և առաջնահերթություններ

Ժամանակահեռ (միջանկյալ և վերջնական) թիրախների առկայություն

Գործողությունների պլաններ / նպատակներին հասնելու ռազմավարություն

Քաղաքականության նպատակների և առաջնահերթությունների մշտադիտարկման և գնահատման համակարգի առկայություն

## Բարելավման հիմնական ուղղությունները

Բարեփոխումները նախատեսող օրենքների պատշաճ իրականացում և իրավակիրարկում

Ներդրումներ գրավելու նպատակով՝ հատուկ խթանների ստեղծում Էներգետիկ ոլորտում

# ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ 2`

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունն ունի մշակված օրենսդրություն և քաղաքականության մշակման ընթացակարգեր, ինչպես նաև՝ նախարարություններ և անհրաժեշտ այլ պետական կառույցներ: Ընդգծելի ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը (ԷԵԲՊՆ) պատասխանատու է Ընդգծելի համակարգի գործունեության կարգավորման առաջնային օրենսդրության մշակման համար: ՀՀ կառավարության առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն հանդիսանում է առումային Ընդգծելի կայի ոլորտի կարգավորող պետական մարմինը: Մյուս կողմից, Վերականգնվող Ընդգծելի կայի և Ընդգծելի սայրողության հիմնադրամը (R2E2/ՎԷԷՀ), պատասխանատու է վերականգնվող Ընդգծելի ոլորտում ծրագրերի իրականացման համար: Անհրաժեշտ է նշել նաև, որ ՎԷԷՀ-ը ոչ պետական մարմին է, հիմնադրվել է 2006թ-ին՝ Ընդգծելի սայրողության և վերականգնվող Ընդգծելի կայի մասին ՀՀ օրենքի համաձայն և նպատակաուղղված է խթանելու ներդրումների հոսքը դեպի Ընդգծելի սայրողության և վերականգնվող Ընդգծելի կայի ոլորտներ: Հիմնադրամը ինքնավար մարմին է, բայց գործում է ԷԵԲՊՆ-ի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) և մի շարք միջազգային կազմակերպությունների՝ հովանու ներքո:

Քաղաքականության մշակման գործընթացում ներգրավված է ոչ միայն ԷԵԲՊՆ-ն, այլև Տնտեսական զարգացման և ներդրումների, Ֆինանսների, Աղյուսակառուցության նախարարությունները և ՀԾԿՀ-ն: Բացի այդ, վարչատառքային միավորները՝ մարզերը, նույնպես մասնակցություն են ցուցաբերում ոլորտային խնդիրների, մասնավորապես, գործառնական իրականացման ընթացակարգերին առնչվող հարցերին:

Ներդրումային ռազմավարության մշակման և իրականացման մշտադիտարկման համար հիմնական պատասխանատու մարմինը Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունն է: Նախարարությունում գործում է «Ներդրեք Հայաստանում» ծրագիրը, որը խորհրդատվություն է տրամադրում երկրում ներդրումային հնարավորությունների և ներդրումների խթանման վերաբերյալ: 2015 թվականին, կառավարությունը հիմնեց Հայաստանի Չարգացման Հիմնադրամը (ՀՀՀ), որի նպատակն է Հայաստան քերել օտարերկրյա ներդրումներ՝ մեկ պատուհանի և հետևողականորեն ծառայությունների տրամադրման միջոցով: Ավելի կոնկրետ, ՀՀՀ-ն պլանավորում է ներդրողներին կաջակցի՝ տրամադրելով մակրոտնտեսական տեղեկատվություն Հայաստանի մասին, օժանդակելով բիզնես գործունեության կազմակերպման գործընթացում և խորհրդատվություն տրամադրելով հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ: Նմանապես, ՎԷԷՀ-ը կհովանավորի հետազոտությունների և ծրագրերի իրականացումը և կօգնի տեղական Ընդգծելի ընկերություններին և շահագրգիռ կազմակերպություններին:

Թեև օրինագծերն ու քաղաքականությունները մշակվում են մի քանի մարմինների կողմից, որոշումների կայացման գործընթացի կառավարումն արդյունավետ է, և պատասխանատվությունները հստակորեն բաշխված են կառավարության համապատասխան մակարդակների և նախարարությունների միջև: Ավելին, որոշումների կայացման գործընթացի թափանցիկության մակարդակը նույնպես բարձր է: Ընդունված օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերի էլեկտրոնային տարբերակները հասանելի են հանրությանը կենտրոնացված շտեմարաններից, որոնք տեղակայված են ([www.arlis.am](http://www.arlis.am)) և ([www.parliament.am](http://www.parliament.am)) կայքերում: Օրենքների և կառավարության որոշումների նախագծերը պարբերաբար հրատարակվում են կառավարության կողմից: Շահագրգիռ կողմերի մեծ մասը՝ գոհ էր թափանցիկության մակարդակից: Նշվել էր նաև, որ օրենքների ու քաղաքականությունների նախագծերի ուսումնասիրության համար տրված ժամանակը նույնպես ողջամիտ է եղել և որ բոլոր շահագրգիռ կողմերն ունեցել են փաստաթղթերի շրջանառությանը մասնակցելու և առաջարկներ ներկայացնելու հավասար հնարավորություններ:

Այնուամենայնիվ, կան նաև ուշադրության արժանի խնդիրներ: Նախնառաջ, չկա որևէ նշանակված մարմին, որ պատասխանատու է միջգերատեսչական համագործակցության համար: Ըստ անհրաժեշտության ստեղծվում են հատուկ հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր՝ տարբեր նախարարությունների միջև երկխոսությունը խթանելու նպատակով: Այս համակարգը քննադատության է արժանացել որոշ շահագրգիռ կազմակերպությունների կողմից և որակվել որպես ոչ խելամիտ: Երկրորդը, թեև հայկական օրենսդրությունը թույլ է տալիս կառավարությանը մասնակցել օրինագծերի շրջանառությանը զուգահեռ ընթացող խորհրդակցական գործընթացին, դա օրենքով ամրագրված պարտադիր պահանջ չէ: Ավելին, որոշ շահագրգիռ կողմեր նշել են, որ մասնավոր ոլորտի կազմակերպությունների մեծ մասն ի վիճակի չէ պատշաճ կերպով մասնակցելու խորհրդակցություններին, քանի որ չունեն բավարար ռեսուրսներ համապատասխան վերլուծություններ իրականացնելու համար: Վերջապես, նշվել է, որ նույնիսկ եթե օրինագծերը ժամանակին հասանելի են դառնում հանրությանը, դրանք միայն բացառիկ դեպքերում են թարգմանվում օտար լեզուներով և մատչելի դառնում ներդրողներին համար:

Հիմնական ցուցանիշ 2	Միավոր
Ինստիտուցիոնալ կառավարում	87.2
Թափանցիկություն	74.3
<b>Ընդհանուր գնահատական</b>	<b>80.7</b>

## Հիմնական ուժեղ կողմերը

Միջկառավարական և միջգերատեսչական մակարդակներում հստակ սահմանված դերեր և պատասխանատվություններ

Ներդրումների խթանման համար պատասխանատու նշանակված մարմնի առկայություն

Օրենքների միասնական շտեմարանի առկայություն

Շահագրգիռ կողմերի ներգրավում կարգավորման դաշտի փոփոխությունների ընթացքում

## Բարելավման հիմնական ուղղությունները

Միջգերատեսչական համագործակցության ապահովման մեխանիզմի կամ մարմնի ստեղծում

Օրինագծերի քննարկմանը շահագրգիռ կողմերի մասնակցության պարտադիր պահանջի սահմանում օրենքով

Օրենքների և ենթաօրենսդրության օտար լեզուներով տարբերակների հասանելիության և մատչելիության մակարդակի բարձրացում

Օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում ողջամիտ և հասկանալի ձևակերպումների ապահովում



# ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ 3`

ԾՈՒԿԱՅԻ, ՄԱՍՆԱԿՈՐ ՈԼՈՐՏԻ և ԿԱՐԳԱԿՈՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՅԱԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Էներգետիկայի ոլորտի հիմնական կարգավորողը ՀԾԿՀ-ն է: Վերջինիս լիազորությունները, պարտականություններն ու գործառնությունները սահմանվում է Էներգետիկայի մասին և Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին ՀՀ օրենքներով: ՀԾԿՀ-ին տրված են էլեկտրաէներգիայի, գազի և հաղորդակցության ոլորտներում հանրային ծառայությունների և վերականգնվող էներգետիկայի ոլորտում ազգային մակարդակով կարգավորման և պատժամիջոցներ կիրառելու լիազորություններ (օր.՝ զգուշացումներ, սակագների նվազեցում, լիցենզիաների կասեցում կամ դադարեցում): ՀԾԿՀ-ն անկախ է պետական և մասնավոր մարմիններից և իրավասու չէ որևէ հրահանգներ հայցելու կամ ստանալու որևէ մարմնից: Հանձնաժողովն ունի անդամներ, որոնց մասնագիտական որակները սահմանվում են ըստ հստակ չափանիշների: Հայաստանը վերջերս ընդունել է օրենք, որով նախատեսվում են փոփոխություններ Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին օրենքում, մասնավորապես, հանձնաժողովի անդամների վերանշանակմանը վերաբերող հոդվածներում: Այնուամենայնիվ, ակնկալվում է, որ վերանշանակմանը վերաբերող նոր դրույթներն ուժի մեջ կմտնեն նոր նախագահի նշանակման պահից սկսած առավելագույնը մեկ տարվա ընթացքում: Պետական բյուջեում ՀԾԿՀ-ին վերաբերող առանձին բյուջետային գիծ չկա:

ՀԾԿՀ-ն ապահովում է իր գործունեության թափանցիկությունը՝ կայքում հրապարակելով կայացված որոշումները և կատարված գնահատումները: Այն նաև, մասնավոր ոլորտի շահագրգիռ կազմակերպությունների հետ պարբերաբար անցկացնում է հանրային լսումներ կարգավորման հարցերի շուրջ: Այդ լսումների վերաբերյալ ծանուցումները հրապարակվում են պաշտոնական կայքում: Ավելին, Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին ՀՀ օրենքով սահմանվում է, որ ՀԾԿՀ-ի որոշումները կարող են վիճարկվել վարչական դատարանում, սակայն սակագները միևնույնն է կմնան անփոփոխ: Դատական կարգով որոշումների բողոքարկման փաստը չի չեղարկում կայացված որոշման ուժի մեջ մտնելը:

Հայաստանում գործում է անկախ մրցակցության պաշտպանություն և ապահովող մարմին: Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (ՏՄՊԴ) այն մարմինն է, որ գործ ունի մրցակցության խնդիրների հետ տարբեր ոլորտներում, ներառյալ՝ Էներգետիկան: ՏՄՊԴ-ն անկախ է այլ պետական մարմիններից իր նպատակներին հասնելու և գործառնությունների իրականացման տեսանկյունից:

Հայաստանի Էներգետիկայի ոլորտի ներդրումային միջավայրը, ընդհանուր առմամբ, կարելի է համարել բավականին բարենպաստ օտարերկրյա ներդրումների համար: Դրա ապացույցն է իրավաբանական անձանց գրանցման ընթացակարգերի պարզեցումը և «մեկ պատուհան»-ի սկզբունքով ծառայությունների տրամադրումը, որը համատեղել է ծառայությունների մի լայն տիրույթ, այդ թվում՝ անվանման գրանցումը, իրավաբանական անձի գրանցումը (նաև առցանց) և ՀԿՀՀ-ի ստացումը: «մեկ պատուհան»-ի սկզբունքով տրամադրվող ծառայությունների լայն սպեկտրի շնորհիվ՝ Հայաստանը կարողացել է բիզնեսի հիմնադրման ծախսերն իջեցնել ավելի ցածր մակարդակի, համեմատած մի շարք եվրոպական և Կենտրոնական Ասիայի երկրների հետ: : Հայաստանը պարզեցրել է հետգրանցումային գործընթացները (այս պահին 4 աշխատանքային օր) և վերացրել է մի շարք բյուրոկրատական խոչընդոտներ շինարարական թույլտվությունների տրամադրման (այս պահին 116 աշխատանքային օր) և գրանցման գործընթացներում (այս պահին 4 աշխատանքային օր):

Էներգետիկ համակարգում գործունեություն ծավալելու լիցենզավորման բոլոր գործընթացները նույնպես պարզեցվել են ՀԾԿՀ-ի կողմից: Էներգետիկայի մասին օրենքի և լիցենզավորման ընթացակարգի համաձայն՝ լիցենզավորման ենթակա են. (1) էլեկտրաէներգիայի, ջերմային էներգիայի և բնական գազի արտադրությունը, փոխադրումն ու բաշխումը, (2) համակարգի օպերատորի ծառայությունների տրամադրումը էլեկտրաէներգիայի և բնական գազի ոլորտներում, (3) արտադրական նոր հզորությունների կառուցումը կամ վերակառուցումը, (4) էլեկտրաէներգիայի և

## Հիմնական ցուցանիշ 3

Կարգավորման արհիվանակցություն 100

ՕՈՒՆ սահմանափակումներ 85.7

## Ընդհանուր գնահատական

92.9

## Հիմնական ուժեղ կողմերը

Օրենքի համաձայն ստեղծված կարգավորման մարմնի առկայություն

Կարգավորող մարմնի գործողությունները թափանցիկ են և արդյունավետ

Լիցենզավորման ընթացակարգերը պարզեցված են

Օտարերկրյա և տեղացի ներդրողներն արժանանում են հավասար վերաբերմունքի

## Բարելավման հիմնական ուղղությունները

Աջակցություն ներդրողներին՝ բյուրոկրատական խոչընդոտների վերացման միջոցով, օր.՝ այցեզրերի կամ աշխատանքային թույլտվությունների տրամադրման գործընթացների պարզեցմամբ

Ժախագրգիռ կողմերի նկատմամբ կարգավորողի հայեցողական լիազորությունների հստակ սահմանում

բնական գազի ներկրումը կամ արտահանումը և (5) էլեկտրաէներգիայի շուկայում մատակարարումը, վաճառքը և գնումը:

Լիցենզավորման գործընթացը ժամանակատար և ծախսատար է, և մասնավորապես արտահանման կամ ներկրման դեպքերում, կարճաժամկետ առևտրային հարաբերությունները դառնում են ոչ գրավիչ: Ընդհանուր առմամբ, ՅԵԿ-ն հայտի վերաբերյալ որոշում պետք է կայացնի ստացման պահից սկսած 60 աշխատանքային օրվա ընթացքում, բայց երբ խոսքը էլեկտրաէներգիայի ներկրման կամ արտահանման մասին է, գործընթացը կարող է տևել մինչև 80 աշխատանքային օր: Բացի այդ, ՅԵԿ-ն գրանցում է ներկրման/արտահանման պայմանագրերը, ինչը նշանակում է, որ լիցենզավորման գործընթացը երկարում է ևս 10 աշխատանքային օրով: Լիցենզիայի դրույթները կարող են փոփոխվել միայն լիցենզավորվող անձի համաձայնությամբ: Ավելին, ներկրողը/արտահանողը պարտավոր է տարեկան վճարել մոտավորապես 10000 ԱՄՆ դոլարի չափով գումար և տրամադրել մոտ 1000 ԱՄՆ դոլարի չափով բանկային հաշվի հավաստագիր: Ծուկայի կանոնները վերաբերում են միայն էլեկտրաէներգիայի արտահանմանը, և պահանջում են, որ արտահանողը պայմանագիր ստորագրի արտադրողի՝ «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի (ԷՅՕ), «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և հաշվարկային կենտրոնի հետ, իսկ վերջիններիս կողմից ստորագրության համար որևէ ժամկետ սահմանված չէ:

ՅԵԿ-ն նաև պատասխանատու է սակագների սահմանման և սակագների սահմանման մեթոդաբանության ընտրության համար: Սակագների վերանայումը կարող է իրականացվել և՛ ՅԵԿ-ի, և՛ լիցենզավորված կազմակերպության կողմից: Այդ գործընթացը բավականին երկարատև է՝ համեմատած Եվրոպական երկրներում նմանատիպ գործընթացների հետ: ՅԵԿ-ն պարտավոր է ավարտել սակագնի վերանայման հայտի ուսումնասիրման գործընթացը 90 աշխատանքային օրվա ընթացքում:

Էներգետիկայի ոլորտում օտարերկրյա ուղիղ ներդրումների մասով կան որոշ սահմանափակումներ, բայց տեղացի և օտարերկրյա ներդրողներն արժանանում են հավասար վերաբերմունքի: Օտարերկրյա կազմակերպություններն իրավունք ունեն տնօրինելու էներգետիկ ծրագրերի բաժնետոմսերի հսկիչ փաթեթը և օրենքով պարտավորված չեն հանդես գալու որպես պետական կամ տեղական այլ կազմակերպությունների գործընկերներ: Օտարերկրյա ներդրողները և օտարերկրացի աշխատակիցներն իրավունք ունեն առանց խոչընդոտների փոխանցելու իրենց սեփականությունը, շահույթը, եկամուտը և այլ միջոցները, որոնք օրինական ճանապարհով ձեռք են բերվել ներդրման կամ աշխատանքի դիմաց վարձատրվելու արդյունքում: Սկզբունքորեն, օտարերկրացի աշխատողների վարձակալումը կախված է մուտքի արտոնագրի/վիզայի կամ աշխատանքի թույլտվության տևողությունից: Այնուամենայնիվ, Հայաստանում օտարերկրյա ներդրողների ներկայացուցիչների և օտարերկրյա ներդրամաբ գործող կազմակերպությունների գործադիր աշխատակազմի անդամների համար վերջերս բացառություն է սահմանվել նշված պահանջներից:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ ներդրումային միջավայրը բարենպաստ է, իսկ կարգավորման դաշտն՝ առողջ, ինչը մասամբ հանդիսանում է Հայաստանում կարգավորման դաշտի հիմնավոր բարեփոխումների արդյունքը, որն ապահովվել է ՀՀ կառավարության և մի շարք նվիրատու կազմակերպությունների միջև համատեղ ձևավորած կոնսորցիումի կողմից 2011թ-ին նախաձեռնված «Կարգավորիչ գիլյոտին» ծրագրի համատեքստում: Այնուամենայնիվ, դեռ կան հարցեր, որ ուշադրության կարիք ունեն:

Առաջին հերթին, երկրի որևէ ոլորտում կամ որևէ տարածքում ներդրում անելու սահմանափակումներ չկան: Ազատ տնտեսական գոտիների (ԱՏԳ) մասին օրենքով նշվում է, որ ԱՏԳ-ում ներդրում անելու իրավունքը տրվում է կառավարության որոշմամբ, որով էլ սահմանվում են ԱՏԳ-ի սահմանները և դրանցում իրականացվող գործունեությունը: Էներգետիկ ոլորտի ներդրումները չեն կարող իրականացվել ԱՏԳ-ում, եթե նման թույլտվություն չի տրվել կառավարության կողմից: Երկրորդ՝ թեև օտարերկրյա քաղաքացիների կողմից գրանցված ընկերությունները հողի սեփականության իրավունք ունեն, օտարերկրյա քաղաքացիներն այդ իրավունքից զրկված են: Ի վերջո, պետք է նշել, որ թեև Հայաստանը նախաձեռնել է էլեկտրաէներգիայի ոլորտի վերակառուցումը՝ արտադրության և փոխադրման ոլորտների ազատականացման միջոցով, էներգետիկ շուկան Հայաստանում դեռ ամբողջությամբ ազատ չէ: Ավելի հստակ, էլեկտրաէներգիայի արտադրությամբ կարող են զբաղվել և պետական, և մասնավոր ընկերությունները: Դրան հակառակ, էլեկտրաէներգիայի փոխադրումը, բաշխումն ու վաճառքը կարգավորվում են. բարձրավոլտ ցանցը պատկանում է պետական ընկերության, իսկ բաշխիչ ցանցի շահագործման (ներառյալ՝ մատակարարման) բացառիկ լիցենզիան տրված է մասնավոր ընկերության: Արդյունքում, ոչ տեղացի, ոչ էլ օտարերկրյա ներդրողները դեռ չեն կարողանում ներդրումներ իրականացնել այս ոլորտում: Բացի այդ, օտարերկրյա ուղիղ ներդրումների մասով սահմանափակումներ կան նաև գազի ոլորտում, ինչը խոչընդոտում է օտարերկրյա ընկերությունների մուտքը շուկա: Եվրասիական տնտեսական միության բնական գազի մեկ միասնական շուկան, որին Հայաստանն անդամակցում է, պետք է ձևավորվի 2020-ական թվականներին, թեև որևէ հստակ գործողությունների պլան դեռ չի նախատեսվել:



# ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ 4՝

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը զգալիորեն բարելավել է իր դատաիրավական համակարգը վերջին տարիներին: Ճահագրգիռ կողմերը նշել են, որ նկատելի փոփոխություններ են գրանցվել վարման ընթացակարգերում, նաև մեղադրական և արդարացման դատավճիռների կայացման ժամանակի և ծախսերի տեսանկյունից: Իրականում, Հայաստանում դատական հայց ներկայացնելը զգալիորեն ավելի էժան է, քան ավելի լայն Եվրոպական կամ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրներում, միջինում: Թեև դատավարության ընդհանուր տևողությունը, այդ թվում՝ հայցի ներկայացումը, դատական լսումները և դատարանի որոշման իրականացումը, ընդհանուր առմամբ, Հայաստանում կարող են տևել 570 օր: Թափանցիկության ապահովման նպատակով՝ Էներգետիկայի ոլորտին վերաբերող վարչական, դատական և արտադատական որոշումների մեծ մասը հրապարակվում է: Ավելին, պետության և մասնավոր ընկերությունների միջև վեճերի կարգավորման այլընտրանքային ճանապարհները պարտադիր չեն, բայց մեծապես խրախուսվում են:

Ճահագրգիռ կազմակերպությունների կողմից վստահաբար նշվել է, որ Հայաստանի դատարաններն ի վիճակի են իրականացնելու միջազգային դատական ատյանների և միջազգային արբիտրաժային տրիբունալների որոշումները: Վերջիններիս իրականացումն ազգային դատարանների կողմից, մասնավորապես արդյունավետ է և ամրագրված է ազգային օրենսդրությամբ: Ըստ երևույթին, հնարավոր է ապահովել պետության դեմ արբիտրաժային դատարանների որոշումների իրականացումը՝ հաշվի առնելով այն, որ համաձայնելով արբիտրաժային կարգավորման տարբերակին, պետությունը կամ պետության ներկայացուցիչը ինքնաբերաբար հրաժարվում է անձեռնմխելիությունից:

Հայաստանի Հանրապետությունը 2006 թվականին ընդունել է օրենք «Առևտրային արբիտրաժի մասին», որը բխում է «UNCITRAL»-ի միջազգային առևտրային արբիտրաժի օրինակելի փաստաթղթից, և հանդիսանում է միջազգային արբիտրաժային որոշումների ճանաչման ու իրականացման Նյու Յորքի կոնվենցիայի, ինչպես նաև պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի կարգավորման մասին կոնվենցիայի և Էներգետիկ խարտիայի պայմանագիրը ստորագրող կողմ: Ավելին, Հայաստանը ստորագրել է 42 երկկողմանի ներդրումային համաձայնագրեր: Մինչև օրս, Հայաստանի դեմ կայացվել է միայն երկու արբիտրաժային որոշում ներդրումների ոլորտում: Ճահագրգիռ կողմերը նաև նշել են, որ վստահ են, որ հայկական դատարաններն ի վիճակի են իրականացնելու օտարերկրյա դատարանների և օտարերկրյա արբիտրաժային տրիբունալների որոշումները:

Գույքի առգրավումը հնարավոր է միայն որպես ծայրահեղ միջոց՝ օրենքով սահմանված կարգով հայտարարված արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում, դատարանի որոշմամբ և նախապես տրամադրված լիարժեք փոխհատուցման դեպքում: Վերջինիս չափը հաշվարկելու մեթոդը մանրամասնորեն նկարագրված է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում: Ճահագրգիռ կողմերը նշել են, որ պետության կողմից պայմանագրերի խախտման կամ վերաբանակցելու դեպքեր վերջին 5 տարիների ընթացքում չեն եղել: Դա, ընդհանուր առմամբ, փաստում է, որ Հայաստանը պահպանում է կայուն պայմանագրային հարաբերություններն օտարերկրյա ներդրողների հետ:

Ի հավելումս գույքի պաշտպանության երաշխիքների, Հայաստանի Հանրապետությունն ապահովում է նաև մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը: Ընդունվել են մի շարք օրենքներ, իրավակիրարկումն ապահովող համապատասխան ենթաօրենսդրությամբ, Հեղինակային և հարակից իրավունքների, Արտոնագրային վճարների, Առևտրային նշանների և Աշխարհագրական նշումների մասին: Ավելին, դեպի Էներգետիկ ոլորտ տեխնոլոգիաների կամ մտավոր սեփականության իրավունքների փոխանցման սահմանափակումներ չկան:

Թեև, վերը նշվածը փաստում է, որ Հայաստանում պահպանվում է օրենքի գերակայությունը, դեռ կան որոշ անհամապատասխանություններ, որ կարգավորման կարիք ունեն:

Հիմնական ցուցանիշ 4	Միավոր
Պայմանագրերի իրականացում, ներքին վեճերի կարգավորում և ՆԴԿԿ	79.4
Սեփականության իրավունքի պաշտպանություն	100
<b>Ընդհանուր գնահատական</b>	<b>89.7</b>

Հիմնական ուժեղ կողմերը
Արբիտրաժային որոշումների արդյունավետ կիրարկում
Պաշտպանություն անհարկի առգրավումից
Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանություն

Բարելավման հիմնական ուղղությունները
Ներդրումային օմբուդսմենի ստեղծում
Օտարերկրյա դատարանների որոշումների ճանաչման շրջանակների ընդլայնում
Իրավական պաշտպանության ազգային բոլոր միջոցները սպառելու պարտադիր պահանջի վերացում
Դատական ակտերի հարկադիր կատարման կառուցվածքի և նորմերի բարեփոխում

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջինը՝ պաշտոնապես գոյություն չունի ներդրումային հարցերով օմբուդսմենի գրասենյակ կամ նմանատիպ որևէ մարմին, ուր ներդրողները կարող են դիմել կառավարության հետ վեճերի առաջացման դեպքում: Որոշ ներդրողներ նշել են, որ խնդիրների լուծման ընթացքում աջակցություն են ստացել ՀՀ-ից: Այնուամենայնիվ, այդ աջակցությունը տրամադրվում է ոչ ֆորմալ ձևաչափով, քանի որ ՀՀ-ն չունի ներդրողների իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) բաժին:

Երկրորդը՝ լիցենզիայի սեփականության իրավունքի փոխանցման նկատմամբ գործում են որոշ սահմանափակումներ: Լիցենզավորման մասին Հայաստանի օրենսդրության համաձայն՝ լիցենզիան տրամադրվում է կոնկրետ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց և չի կարող օտարվել ըստ ցանկության: Հայաստանի Էներգետիկ ոլորտում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի բաժնետոմսերի միայն 25%-ը կարող է օտարվել այլ լիցենզավորված կողմին, առանց ՀԾԿ-ի նախնական համաձայնության: Այս կանոնը չի վերաբերում փոքր հիդրոէլեկտրակայաններին և վերականգնվող Էներգետիկայի ոլորտում գործող լիցենզավորված այլ անձանց:

Երրորդը՝ որոշ դեպքերում, Հայաստանի օրենսդրությունը պահանջում է իրավական պաշտպանության ազգային բոլոր ատյանների սպառում, նախքան միջազգային արբիտրաժային գործընթաց սկսելը: Այդ պատճառով, ներդրողները, որ չեն կարողանում կիրառել երկկողմանի կամ բազմակողմանի ներդրումային համաձայնագրի այն դրույթները, որոնք պարտադրում են Հայաստանին համաձայնել արբիտրաժային տրիբունալի որոշմանը, ստիպված են սպառել իրավական պաշտպանության բոլոր ազգային միջոցները, նախքան որևէ արբիտրաժային վարույթ սկսելը:

Ի վերջո, օտարերկրյա դատարանների որոշումների ճանաչումը, որպես այդպիսին այդքան որոշիչ չէ, որքան արբիտրաժային տրիբունալների որոշումների իրականացումը: Այդ ճանաչումը հիմնված է փոխադարձ համաձայնության վրա և կախված է կոնկրետ երկրի հետ բանակցված պայմաններից: Այս անորոշությունը կարող է շիսկ ներկայացնել օտարերկրյա ներդրողների համար:

Էներգետիկ ոլորտում ներդրումների խթանման և Հայաստանի կարգավորման դաշտի նկատմամբ ներդրողների վստահության ամրապնդման գործում կարևոր դեր է խաղում Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Ճանաչելով բարենպաստ ներդրումային միջավայրը պահպանելու Հայաստանի հանձնառությունը, Էներգետիկ խարտիայի քարտուղարությունը ներկայացնում է մի շարք առաջարկություններ, որոնք կօգնեն Հայաստանին ԷՆՌԳ հիմնական ցուցանիշների հետ կապված այն ռիսկերի վերացման գործում, որոնք կարող են վտանգել ներդրումային միջավայրը երկրում և ավելացնել Էներգետիկ ոլորտում բիզնես գործունեության ծախսերը:

## Հիմնական ցուցանիշ 2՝ քաղաքականության մշակման գործընթացների կառավարում

Թերի համակարգումը խաթարում է քաղաքականության համակողմանի միջոցառումների իրականացման կարողությունը, առաջացնում է կրկնվող և միմյանց հակասող կանոններ ու ընթացակարգեր, ինչն էլ բերում է վարչական բեռի ավելացմանը: Դրան հակառակ, արդյունավետ միջգերատեսչական համագործակցությունը կնպաստի այն պետական մարմինների միջև կրկնվող լիազորությունների և արտոնությունների վերացմանը, որոնք պատասխանատու են քաղաքականության մշակման և կանոնակարգերի իրականացման համար: Ներկայում, Հայաստանի Էներգետիկ ոլորտի և ներդրումների քաղաքականության մշակման պատասխանատվությունը տրված է մի շարք պետական մարմինների, մասնավորապես՝ ԷԵԲՊՆ-ին, Կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին, ՀԾԿ-ին և ՎԷԷՀ-ին: Ավելին, Տնտեսական զարգացման և ներդրումների, Ֆինանսների և Արդարադատության նախարարությունները և մարզային իշխանությունները նույնպես դեր ունեն քաղաքականության մշակման գործընթացի կառավարման մեջ: Այնուամենայնիվ, ինչպես նշել են մի շարք շահագրգիռ կողմեր, Հայաստանում գոյություն չունի միջգերատեսչական համագործակցության համակարգման այնպիսի մեխանիզմ, որը մեկ հովանու տակ կհավաքի բոլոր նշված դերակատարներին: Գոյություն ունեն միայն հատուկ հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր, որ ձևավորվում են ըստ պահանջի:

Քաղաքականությանը վերաբերող միջոցառումներ.

- » Հայաստանի Էներգետիկ ոլորտում ներդրումների մշտական հանձնաժողովի ստեղծում՝ գոյություն ունեցող հատուկ հանձնաժողովների և աշխատանքային խմբերի փոխարեն, ինչը կապահովի քաղաքականության մշակման ամբողջ գործընթացի համակարգումը, ներառյալ՝ նախաձեռնումը, ձևակերպումները,

իրականացումը, գնահատումն ու մշտադիտարկումը, և հորիզոնական, և ուղղահայց առանցքներում:

- » Հորիզոնական առանցքի վրա այդ միջգերատեսչական մարմինը կարող է համատեղել մի շարք նախարարությունների և կարգավորող մարմինների գործառնություններ՝ բարեփոխումների վերահսկողության ու կառավարման տեսանկյունից:
- » Ուղղահայաց առանցքի վրա նույն մարմինը կհամագործակցեր առօրյա աշխատանքն իրականացնող կառույցների և մարզերի հետ՝ բիզնես գործունեության կազմակերպման, ֆինանսական միջոցների պաշտպանության, լիցենզիաների ու թույլտվությունների ստացման հարցերում ներդրողներին ուղղորդելու և աջակցելու նպատակով:
- » Միջգերատեսչական մարմինը կարող է նաև համագործակցել ՀՀ-ի հետ՝ ներդրողներին տրամադրվող աջակցության որակը, ծավալը և շրջանակներն ընդլայնելու նպատակով:

Կառավարության տարբեր մակարդակներում արդյունավետ համակարգմանը զուգահեռ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև շահագրգիռ կողմերի ներգրավման վրա, ինչը ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովման անհրաժեշտ նախապայմաններից մեկն է: Հայաստանի գործող օրենսդրական կարգավորման շրջանակներում, խորհրդակցությունները պաշտոնապես նախատեսված են: Թեև, խորհրդակցությունների անցկացումը պարտադիր չէ, և հետևաբար՝ հասանելի չէ մասնավոր ոլորտի որոշ կազմակերպությունների համար:

Քաղաքականությանը վերաբերող միջոցառումներ.

- » Կառավարության կողմից քաղաքականության նպատակների ու դրանց իրականացման փոփոխությունների դեպքում՝ ներդրողների պատճառ իրազեկումն ու ծանուցումը հրամայականներ են: Ներդրողները պետք է վստահ լինեն, որ կառավարությունը պատասխանատու կերպով է իրականացնում իր լիազորությունները և, այդպիսով, պատշաճ կերպով հաշվի առնում ներդրողների մտահոգությունները:
- » Հետևաբար, անհրաժեշտ է, որ Հայաստանի կառավարությունը ստեղծի ներդրողների հետ հաճախակի հաղորդակցելու մշտական հարթակ (\$ֆորում): Վերջինս կարող է աշխատել տարբեր ձևաչափերով, օր.՝ առանձին կոմիտեի, որը կկրի բոլոր շահագրգիռ կողմերին մեկ սեղանի շուրջ հավաքելու պատասխանատվությունը, կամ՝ տեղեկատվության փոխանակման ու հաղորդակցման էլեկտրոնային հարթակի միջոցով: Այլընտրանքային տարբերակն այն է, որ միջգերատեսչական համակարգման մեխանիզմը համալրվի նաև մի կողմից ներդրողների միջև, իսկ մյուս կողմից՝ պատկան

մարմինների հետ հարատև և չընդհատվող երկխոսության պահպանման առաջադրանքով՝ երաշխավորելով վերջիններիս կարծիքների միասնականությունը:

### **Հիմնական ցուցանիշ 3՝ շուկայի, մասնավոր ոլորտի և կարգավորվող ընկերությունների վերահսկողություն**

Էներգետիկ ոլորտի անկախ կարգավորող մարմինն անհրաժեշտ է, երբ երկիրը պլանավորում է ազատականացնել էներգետիկ ոլորտը և ստեղծել մրցակցային միջավայր՝ նաև մասնավոր ընկերությունների մասնակցությամբ: ՀԾԿՀ-ն արդեն ունի անկախության որոշ կարևոր բաղադրիչներ. այն առանձին մարմին է և որևէ նախարարության կառուցվածքում չի գտնվում, օրենքով սահմանված կարգով և տրված պատասխանատվության շրջանակներում կայացնում է անկախ որոշումներ: Ամեն դեպքում, կառուցվածքի և որոշ գործառնություններ տեսանկյունից ՀԾԿՀ-ն հնարավոր է հզորացնել: Առաջարկվող առաջին երկու միջոցառումները վերաբերում են ՀԾԿՀ-ի անկողմնակալությանը, իսկ երրորդը՝ գործառնություններին:

Քաղաքականությանը վերաբերող միջոցառումներ.

- » ՀԾԿՀ-ի անկախությունը հնարավոր է ավելի ամրապնդել՝ հանձնաժողովի անդամների վերանշանակման սահմանափակումների գործադրմամբ, ի լրումն օրենքում նախատեսվող փոփոխությունների, որոնք ուժի մեջ են մտնելու նոր նախագահի ընտրվելու պահից ոչ ուշ քան մեկ տարվա ընթացքում:
- » ՀԾԿՀ-ն պետք է ունենա սեփական բյուջեն տնօրինելու լիազորություն և կարող է ֆինանսավորվել կարգավորման վճարներից՝ պետական բյուջեի փոխարեն: ՀԾԿՀ-ն պետք է ունենա սեփական բյուջեից հատկացումների լիազորություն, և ծախսերը պետք է պարբերաբար ստուգվեն և հաստատվեն անկախ աուդիտ իրականացնող մարմնի կողմից: Դա նշանակում է, որ ՀԾԿՀ-ն որևէ հրահանգներ չի ստանա կառավարությունից սեփական բյուջեի ծախսման վերաբերյալ, և կառավարության կողմից ՀԾԿՀ-ի բյուջեի հաստատումն, որպես այդպիսին, ազդեցության լծակ չի հանդիսանա վերջինիս առաջնահերթությունների սահմանման և պարտականությունների կատարման կարողությունը խաթարելու կամ լիազորությունները արդյունավետորեն իրականացնելու տեսանկյուններից:
- » ՀԾԿՀ-ի կանոնները էլեկտրաէներգիայի ներկրման և արտահանման գործարքների վերաբերյալ պարունակում են անհարկի բարդություններ և սահմանափակում են ոլորտի զարգացումը: Էներգետիկ շուկան և այն սպառողները, որոնք չեն կարող էլեկտրաէներգիա ներկրել հարևան երկրներից, ի վերջո կշահեն ներկրման և արտահանման նկատմամբ կիրառվող սահմանափակումների

վերացումից: Յետևաբար, Հայաստանը կարող է վերանայել իր ներկրման և արտահանման կանոնները, ինչպես նաև այդ գործարքների համար սահմանել ռացիոնալ վճարներ:

### **Հիմնական ցուցանիշ 4՝ իրավունքի գերակայություն**

Վերջին տասնամյակում Հայաստանի իշխանությունները մեծ ջանքեր են գործադրել ներդրումային միջավայրի բարելավման և ապագա ներդրողների համար անհարկի բեռը թեթևացնելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է լրացուցիչ քայլեր անել վեճերի կարգավորման այլընտրանքային մեխանիզմների զարգացման ուղղությամբ:

Քաղաքականությանը վերաբերող միջոցառումներ.

- » Օտարերկրյա ներդրողների բողոքների ուսումնասիրման և բավարարման լիազորություններ ունեցող օմբուդսմենի գրասենյակի ստեղծումը քայլ է ճիշտ ուղղությամբ: Ինչպես փաստում է այլ երկրների փորձը, ներդրումային ոլորտի օմբուդսմենի ամկայությունը կարող է իրապես արդյունավետ լինել ինչպես վեճերի կանխարգելման, այնպես էլ բողոքների անկողմնակալ կերպով և ժամանակին բավարարելու տեսանկյուններից:
- » Օմբուդսմենը կարող է կարևոր դեր խաղալ պոտենցիալ վեճերի կանխարգելման գործում՝ ներդրողներին իրենց իրավունքների և պատասխանատվությունների մասին տեղեկացնելու, համապատասխան պետական մարմինների հետ խորհրդակցելու և կառավարությանը քաղաքականության բարելավման ուղղությամբ խորհրդատվություն տրամադրելու միջոցով:
- » Վեճերի կարգավորման գործառույթը, մյուս կողմից, կարող է ընդգրկել վերլուծությունների իրականացում և բողոքների գրանցում տարբեր շրջաններում, արդյունաբերական ոլորտներում կամ օտարերկրյա ներդրումներով հիմնադրված ընկերություններում, վեճերի լուծման բացառիկ լիազորություններով օժտված աշխատակիցների նշանակում, այցելություններ և երկկողմանի խորհրդակցությունների կազմակերպում:

#### **The Energy Charter Secretariat's EIRA team**

Tomasz Bąk  
Théophile Keïta  
David Kramer  
Ishita Pant  
Anna Pitaraki  
Theresia Sumarno

#### **The Energy Charter Secretariat's EU4Energy team**

Bilyana Chobanova  
Anna Nosichenko  
Augustin Chabrol

#### **Contact:**

Bilyana Chobanova  
EU4Energy Project Manager  
EU4Energy@encharter.org

David Kramer  
EIRA Project Leader  
David.Kramer@encharter.org

#### **Address:**

Energy Charter Secretariat  
Boulevard de la Woluwe, 46  
B-1200 Brussels, Belgium  
www.energycharter.org